Երևանի Մ. Հերացու անվան
Պետական Բժշկական Համալսարան

Ֆոկուս խմբային հարցման ամփոփում

Կրթության որակի գնահատման
և ապահովման կենտրոն 30.01.2025թ.

Կրթական ծրագիր՝ «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիր

Մասնակիցներ՝ ծրագրի ուսանողներ

Անցկացման ձևաչափ՝ բաց քննարկում

Հարցազրուցավարներ՝ Արամ Հայրապետյան (ԵՊԲՀ Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավար), Մերի Սևունի (Հանրային առողջության ֆակուլտետի որակի ապահովման պատասխանատու)

Հիմնական արդյունքներ և կարծիքներ

1. **Սպասելիքների արդարացում** Ուսանողներ մեծամասնությունը նշել է, որ սպասելիքները **լիովին կամ հիմնականում արդարացվել են**: Ստացված գիտելիքները կիրառելի են ամենօրյա աշխատանքում և օգնում են գործնական խնդիրների լուծմանը:
2. **Գործնական խնդիրներ և ծրագրի վերաբերյալ կարծիքներ**
    - Կառավարման ու առաջնորդության հմտությունների զարգացումը օգնել են մասնագիտական կողմնորոշման հարցում, ինչպես նաև

նպաստել են ստացած գիտելիքների առավել արդյունավետ կիրառմանը:
    - Դրական օրինակ՝ մեկ շրջանավարտ ստացել է առաջարկ դեղագործական ընկերությունում մենեջերի պաշտոնում և կարծում է, որ ստացված գիտելիքները կօգնեն արդյունավետ կառավարմանը:
3. **Տեսական և գործնական ժամերի հարաբերակցություն**
    - Գերակշռում է **տեսական բաղադրիչը**:
    - Ըստ մեծամասնության՝ **անհրաժեշտ է ավելացնել գործնական ժամերը:**
    - Առաջարկներ՝ ցանկալի է ուղղորդել կլինիկաներ կամ կառավարման ոլորտներ (նախարարություններ), որտեղ դիտորդի կարգավիճակում կստանան պրակտիկ գիտելիքներ:
4. **Դասավանդման մեթոդաբանություն և բովանդակություն**
    - Առարկաների մեծ մասը համարվում է **տրամաբանական և կարևոր:**
    - Խնդիր՝ որոշ առարկաներ **նմանատիպ** են և կարելի է միավորել՝ խնայելով ժամանակ:Նշվեց «Կենսավիճակագրություն II» առարկայի երկար տևողությունը: Բացի այդ, նշվել է, որ «Կազմակերպական վարքագիծ» առարկայի բովանդակությունը որոշ դեպքերում կրկնում է «Մարդկային ռեսուրսների կառավարում» դասընթացը, իսկ «Առողջապահական ծրագրերի վերահսկում և գնահատում» առարկայի առանձին թեմաներ համընկնում են «Առողջապահական ծրագրերի պլանավորում և իրագործում» դասընթացի բովանդակության հետ:
    - Ամենաարդյունավետ մեթոդներ՝ դեպքերի քննարկումներ, հանրային խոսքի և ներկայացման հմտությունների ձևավորմանը ուղղված պարապմունքներ, էթիկական դեպքերի քննարկումներ (օրինակ՝ վիրահատական առաջնահերթություն երկու հիվանդի դեպքում):
5. **Դասացուցակի ծանրաբեռնվածություն**
    - Որոշ շրջանավարտներ օպտիմալ էին համարել, որոշ առարկաների դեպքում («Կենսավիճակագրություն», «Տվյալների կառավարում») շաբաթական 5 օր դասավանդումը, սակայն մեծամասնությունը նպատակահարմար էր գտել վերոնշյալ առարկաներին շաբաթական 3 օր տրամադրելը
    - Շրջանավարտները նշեցին, որ մեկ շաբաթյա ցիկլերը այդքան էլ արդյունավետ չէին, հատկապես, երբ երեք օրից մեկը տրամադրվում էր ստուգարքին (Օր՝ «Որակական հետազոտության մեթոդներ» և «Բուժհաստատությունների կառավարում»):

6. **Ուսանողի աջակցություն**
    - Շրջանավարտները համակարծիք էին, որ դասախոսները **պատրաստակամ** են ուսանողին աջակցելու հարցում:
    - Իսկ ադմինիստրատիվ աջակցությունը՝ հատկապես դեկանատային օղակում, գնահատվում է շատ **բարձր:**
7. **Գնահատման ձևեր**
    - Ամենաօգտակար համարվում են **երկու ձևաչափերի համադրությունը՝** գրավոր թեստեր + բանավոր քննություններ / ներկայացումներ:
    - Կարծիք՝ կառավարչի մասնագիտության համար պրեզենտացիաներն ու քննարկումները հատկապես կարևոր են:
8. **Հետադարձ կապ**
    - Ընդհանուր առմամբ գոհ են դասախոսների աջակցությունից, սակայն նշում են, որ բացասական գնահատականի դեպքում կատարված սխալների քննարկում միշտ չէ, որ եղել է:
    - Առաջարկ՝ ուսանողի բացասական արդյունքները պարտադիր քննարկել և մեկնաբանել թերությունները:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ «Առողջապահության կազմակերպում և կառավարում» կրթական ծրագիրը ընդհանուր առմամբ հաջողված է և ծառայում է իր նպատակին: Ուսանողների մեծամասնության սպասելիքները արդարացվել են, իսկ ստացված գիտելիքները գնահատվում են որպես կիրառելի և օգտակար գործնական խնդիրների լուծման համար:

Ծրագրի ուժեղ կողմերն են.

- Անձնակազմի աջակցությունը. Թե՛ դասախոսական կազմը, թե՛ դեկանատը ցուցաբերում են բարձր պատրաստակամություն և աջակցություն ուսանողներին:
- Հմտությունների զարգացումը. Ծրագիրը նպաստում է կառավարչական և առաջնորդության հմտությունների ձևավորմանը, ինչը օգնում է մասնագիտական կողմնորոշմանը և կարիերայի աճին:

- Մեթոդաբանությունը. Իրավիճակային խնդիրների (case study) քննարկումը և ներկայացման հմտությունների դասերը համարվում են ամենաարդյունավետ մեթոդները:

Այնուամենայնիվ, առկա են բարելավման ենթակա ոլորտներ, մասնավորապես՝ տեսական և գործնական ժամերի հարաբերակցության, դասացուցակի օպտիմալացման և առարկաների տևողության անհամաչափ բաշխման վերաբերյալ:

Առաջարկություններ

Հիմնվելով մասնակիցների կարծիքների և բարձրացված խնդիրների վրա՝ ներկայացվում են հետևյալ առաջարկությունները ծրագրի բարելավման համար.

1. Ուսումնական պլանի և բովանդակության բարելավում

- Ավելացնել գործնական բաղադրիչը. Տեսական նյութի գերակշռությունը հավասարակշռելու նպատակով առաջարկվում է ուսանողներին որպես դիտորդ ուղղորդել կլինիկաներ կամ առողջապահության կառավարման մարմիններ (օրինակ՝ նախարարություն)՝ պրակտիկ գիտելիքներ ստանալու համար:
- Օպտիմալացնել առարկայացանկը. Վերանայել ուսումնական ծրագիրը՝ նմանատիպ բովանդակություն ունեցող առարկաները միավորելու և ժամանակ խնայելու համար:
- Ներդնել ուսումնական պրակտիկա տարբեր առողջապահական կազմակերպություններում:

2. Դասացուցակի և ծանրաբեռնվածության վերանայում

- Բեռնաթափել շաբաթական գրաֆիկը. Ծանր առարկաների դեպքում (օրինակ՝ Կենսավիճակագրութուն) դասավանդումը կազմակերպել շաբաթական 3 օր՝ նախկին 5-ի փոխարեն, ինչը համարվում է ավելի նպատակահարմար:
- Վերանայել դասընթացների տևողությունը. Խուսափել կարճ՝ 1-շաբաթյա ցիկլերից, հատկապես եթե դրանց հաջորդում են հաճախակի ստուգարքներ, քանի որ դա նվազեցնում է ուսուցման արդյունավետությունը:

3. Հետադարձ կապ

- Ապահովել հետադարձ կապ. Ներդնել պարտադիր ընթացակարգ, ըստ որի՝ ցածր կամ բացասական գնահատականի դեպքում դասախոսը պետք է ուսանողի հետ քննարկի թերությունները և մեկնաբանի սխալները: